

«ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄԵՍ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱԳԱՀ Ռ. ԶՈՉԱՐՅԱՆ

« 24 » դեկտեմբերի 2005թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 նոյեմբերի 2005 թվականի N 2171-Ն

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2006 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

2005թ. դեկտեմբերի 19
Երևան

2006 ԹՎ Ա Կ Ա Ն Ի Ծ Ր Ա Գ Ի Ր

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՉԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ

1. ՆԱԽԱԲԱՆ

Կարևորելով փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) դերը երկրի տնտեսության զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության միջին խավի ձևավորման, երկրում սոցիալական և քաղաքական կայունության ապահովման գործում, Հայաստանի Հանրապետության կառավարությունը ՓՄՁ-ի ոլորտը համարում է երկրի տնտեսության զարգացման գերակա ուղղություններից մեկը և շարունակական քայլեր ձեռնարկում ոլորտի պետական աջակցության և զարգացման ուղղությամբ:

ՓՄՁ-ն հանդիսանում է Հայաստանի Հանրապետության տնտեսության դինամիկ զարգացող ոլորտներից մեկը: Դրա մասին է վկայում այն փաստը, որ վերջին 3 տարիներին ստեղծվել են շուրջ 25.000 ՓՄՁ-ի սուբյեկտներ, իսկ միայն 2004 թվականի ընթացքում ստեղծվել են շուրջ 9.000 նոր ՓՄՁ-ի սուբյեկտներ՝ ապահովելով ավելի քան 22.000 նոր աշխատատեղ: Դրա հետ մեկտեղ ՓՄՁ-ի ոլորտը նշանակալի դեր է խաղում երկրի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ձևավորման գործում. 2004 թվականի տվյալներով ՓՄՁ-ի ոլորտի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմել է շուրջ 39 տոկոս՝ գրեթե կրկնակի գերազանցելով 2000 թվականի մակարդակը, իսկ ըստ նախնական կանխատեսումների 2005 թվականին այս ցուցանիշը կկազմի շուրջ 40%:

ՓՄՁ-ի ոլորտի զարգացման միտումները պահպանվել են նաև 2005 թվականին: Իրականացման փուլում է ՓՄՁ-ի պետական աջակցության 2005 թվականի ծրագիրը: ՓՄՁ-ի պետական աջակցության 2005 թվականի ծրագրային միջոցառումների շուրջ 70 տոկոսը նպատակաուղղված է Հայաստանի Հանրապետության տարածաշրջաններում տնտեսական ակտիվության բարձրացմանը: Բացի այդ, միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպություններից ֆինանսական միջոցների ներգրավման հաշվին ընդլայնվել են ՓՄՁ-ի ոլորտի հեռանկարային զարգացմանն ու այդ նպատակով իրականացվող պետական աջակցությանն ուղղված ծրագրային միջոցառումների շրջանակները: Մասնավորապես.

2005 թվականին միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ծավալվել է արդյունավետ աշխատանք: Շարունակվել է ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի հետ համատեղ իրականացվող ծրագիրը, միաժամանակ սկսվել են այդ ծրագրի հաջորդ փուլի (2006-2008 թվականներ) մշակման աշխատանքները:

2005 թվականի հունիսին Ճապոնիայի տեխնիկական համագործակցության շրջանակներում Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության, Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության և «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի (Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ) միջև ստորագրվել է եռակողմ Արձանագրություն՝ «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկություններում մարդկային ռեսուրսների զարգացման ծրագրի» (2005-2008 թվականների կտրվածքով) իրականացման վերաբերյալ:

Բանակցությունների արդյունքում համաձայնություն է ձեռք բերվել Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակի հետ երկարաժամկետ համագործակցության մասին: 2005 թվականի ընթացքում Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության և ՄԱԿ-ի Ջարգացման Ծրագրի հետ համատեղ Հայաստանի Հանրապետության տարածաշրջաններում իրականացվել է բիզնես ինկուբատորների ստեղծման հետազոտություն, իսկ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակի և «Փոքր և միջին ձեռնարկությունների խթանում» ծրագրի հետ համատեղ՝ բիզնես ինկուբատորներին նվիրված միջազգային սեմինար-խորհրդակցություն:

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից արդեն իսկ հաստատվել է Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի և Միացյալ Թագավորության միջազգային զարգացման վարչության կողմից մշակված ՓՄՁ-ի ոլորտի զարգացման տարածաշրջանային համատեղ ծրագիրը, որը կգործարկվի 2005թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին: Այն կիրականացվի Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի և Տավուշի մարզերում (հիմնականում հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում) և կշարունակվի մինչև 2008 թվականը:

2005 թվականին Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի և «Փոքր և միջին ձեռնարկությունների խթանում» ծրագրի միջև շարունակվել է համատեղ ծրագրի իրականացումը՝ Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի ինստիտուցիոնալ ամրապնդման, սկսնակ գործարարներին աջակցության ցուցաբերման, ՓՄՁ աջակցող ենթակառուցվածքների զարգացման ուղղություններով:

Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի գործունեության ապահովման նպատակով ՓՄՁ-ի պետական աջակցության 2005 թվականի ծրագրի շրջանակներում հիմնադրվել է Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի ևս 4 մարզային մասնաճյուղ՝ ՀՀ Արմավիրի, (ք. Արմավիր), Արարատի (ք. Արտաշատ), Գեղարքունիքի (ք. Սևան) և Վայոց Ձորի (ք. Վայք) մարզերում, ի լրումն արդեն իսկ հիմնադրված 6 մասնաճյուղերի ՀՀ Շիրակի (ք. Գյումրի), Սյունիքի (ք. Միսիան), Տավուշի (ք. Իջևան), Կոտայքի (ք. Չարենցավան), Լոռու (ք. Ստեփանավան) և Արագածոտնի (ք. Ապարան) մարզերում, որով ավարտվեց Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի մարզային մասնաճյուղերի ցանցի ձևավորման գործընթացը:

2005 թվականի ընթացքում, ըստ նախնական կանխատեսումների, վարկային երաշխավորությունների տրամադրման, որակի կառավարման համակարգերի ներդրման, ուսուցողական, տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն է ցուցաբերվել Երևանում և ՀՀ այլ մարզերում գործող շուրջ 4500 ՓՄՁ-ի սուբյեկտի:

2005 թվականի ընթացքում աշխատանքներ են իրականացվել նաև ՓՄՁ-ի պետական աջակցության 2004թ. ծրագրի շրջանակներում ստեղծված «Անդրոն-գիտահետազոտական ինստիտուտ-տեխնոպարկի» (այսուհետ՝ տեխնոպարկ) ինստիտուցիոնալ զարգացման և ամրապնդման ուղղությամբ:

ՓՄՁ-ի ոլորտի զարգացման միտումների հետ մեկտեղ ՓՄՁ-ի ոլորտի ուսումնասիրությունների և վարչական մոնիտորինգի արդյունքում բացահայտվել են մի շարք հիմնախնդիրներ, որոնց դեռ շարունակում են բախվել ՓՄՁ-ի սուբյեկտները: Այդ հիմնախնդիրները պայմանավորված են օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով, մասնավորապես, ՓՄՁ-ի սուբյեկտների համար ֆինանսական (վարկային) միջոցների անմատչելիությամբ, գործարար տեղեկատվության, խորհրդատվության ստացման ու կադրերի մասնագիտական ուսուցման հարցերում առկա դժվարություններով, ՓՄՁ-ի սուբյեկտների արտադրանքի (ծառայությունների) շուկաներ առաջմղման հետ կապված խնդիրներով, ինչպես նաև սկսնակ գործարարների համար ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հետ կապված գործարար հմտությունների պակասով:

Հայաստանում ՓՄՁ-ի ոլորտի պետական աջակցությանն ու զարգացմանը, գործարար ու ներդրումային միջավայրի բարելավմանն, ինչպես նաև նշված հիմնախնդիրների հաղթահարմանն են ուղղված 2006 թվականի ընթացքում իրականացվելիք ծրագրային միջոցառումներն, ինչը կարևոր նախապայման է հանդիսանում երկրի տնտեսական աճի, բնակչության զբաղվածության ապահովման ու նրա սոցիալական վիճակի բարելավման և ընդհանուր առմամբ երկրում աղքատության հաղթահարման շարունակականության ապահովման գործում:

2. ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2006 թվականի ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) մշակման և իրականացման հիմքը «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն է:

Ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել նաև՝

ա) 2003 թվականի հունիսի 17-ին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունված Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագիրը,

բ) Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման քաղաքականության և ռազմավարության հիմնադրույթները (Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի օգոստոսի 3-ի նիստի N32 արձանագրության 3-րդ կետ),

գ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 2-ի N1736-Ն որոշմամբ հաստատված՝ Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2005 թվականի ծրագիրը,

դ) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 1922-Ն որոշումը,

ե) Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 1-ի N777-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության 2006-2008 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը,

զ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի N 994-Ն որոշմամբ հաստատված՝ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը:

3. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակն է պետական շարունակական աջակցությամբ նպաստել ՓՄՁ-ի ոլորտի դերի աստիճանական բարձրացմանը երկրի սոցիալ-տնտեսական և տարածաշրջանային կայուն զարգացման բնագավառներում:

Ծրագրի նպատակներն են՝

ա) ՓՄՁ-ի սուբյեկտների աջակցության համապատասխան ենթակառուցվածքների ամրապնդումը,

բ) ՓՄՁ-ի սուբյեկտների ֆինանսական և ներդրումային հնարավորությունների ընդլայնումը,

գ) ՓՄՁ-ի սուբյեկտների նորարարական և արտաքին տնտեսական գործունեության ընդլայնումը,

դ) ՓՄՁ-ի սուբյեկտների՝ գործարար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական ծառայություններից օգտվելու հնարավորությունների ընդլայնումը,

ե) գործարարությամբ զբաղվելու հնարավորությունների ընդլայնումը:

Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքներն են՝

ա) երկրի ՀՆԱ-ում ՓՄՁ-ի սուբյեկտների տեսակարար կշռի հետագա ավելացումը,

բ) Հայաստանի Հանրապետության մարզերում ՓՄՁ-ի սուբյեկտների թվի ավելացումը և դրանց հաշվին նոր աշխատատեղերի ստեղծումը,

գ) ՓՄՁ-ի սուբյեկտների մրցունակության բարձրացումը և նրանց կողմից թողարկվող արտադրանքի և մատուցվող ծառայությունների քանակական և որակական աճը,

դ) Հայաստանի Հանրապետության մարզերում և հեռավոր բնակավայրերում գործարար ակտիվության բարձրացումը, այդ նպատակով ծրագրի շրջանակներում ցուցաբերվող աջակցության շուրջ 70 տոկոսն ուղղելով Երևան քաղաքից դուրս գործող ՓՄՁ-ի սուբյեկտներին:

4. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ

ա) Ծրագիրն իրականացվում է Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի և սույն ծրագրով նախատեսված ՓՄՁ-ի ոլորտին աջակցող այլ կառույցների միջոցով:

բ) Ծրագրի իրականացման շրջանակներում նախապատվությունը տրվում է արտադրության ոլորտում գործող, նորարարություններ և բարձր տեխնոլոգիաներ կիրառող և արտահանման ներուժ ունեցող ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցությանն, ինչպես նաև սկսնակների, երիտասարդների, կանանց, գործազուրկների, հաշմանդամների և փախստականների ձեռներեցության զարգացմանը:

գ) Ծրագրի իրականացման նշանակալի մասն ուղղվում է Երևան քաղաքից դուրս՝ Հայաստանի Հանրապետության այլ մարզերում գործող ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ցուցաբերմանը:

դ) Համաձայն «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ ՓՄՁ-ի պետական աջակցության տարեկան ծրագրերի ֆինանսավորումը, որն արտացոլվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում՝ առանձին տողով, կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

ե) Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ փոխհամաձայնությունների շրջանակներում 2006 թվականին կիրականացվեն ՓՄՁ-ի ոլորտի զարգացման համատեղ ծրագրեր (համաֆինանսավորման սկզբունքով)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՍԱԿԱՐԳԸ

2006 թվականի համար նախատեսված ծրագրային միջոցառումների համակարգն ընդգրկում է ՓՄՁ-ի ոլորտի զարգացման և պետական աջակցության հետևյալ հիմնական ուղղությունները՝

5.1 ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության համապատասխան ենթակառուցվածքների ամրապնդում

5.1.1 Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի կենտրոնական գրասենյակի և մարզային մասնաճյուղերի ամրապնդում և դրանց գործունեության ընդլայնում

Կարևորելով ՓՄՁ-ի ոլորտի դերը Հայաստանի Հանրապետության տարածքային տնտեսական զարգացման գործում, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության մարզերում (տարածաշրջաններում) Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի կողմից իրականացվող ծրագրերի (միջոցառումների) համակարգման անհրաժեշտությունը՝ Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում ստեղծվել են Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի մասնաճյուղեր՝ ձևավորելով Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի մարզային մասնաճյուղերի ցանց:

Ծրագրով նախատեսվում է կատարելագործել Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի բոլոր մարզային մասնաճյուղերի նյութատեխնիկական ապահովվածությունը, ինչպես նաև ներդնել «Իրտեկ» տեղեկատվական համակարգ, որից կարող են օգտվել ՓՄՁ-ի սուբյեկտները:

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի մարզային մասնաճյուղերի կողմից ՓՄՁ-ի սուբյեկտներին երկրի ընդհանուր տնտեսական վիճակի, արտաքին և ներքին շուկաներում, իրավաօրենսդրական դաշտում կատարվող փոփոխությունների և ձեռնարկատիրության ոլորտին առնչվող այլ գործընթացների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվությամբ ապահովելու նպատակով ծրագրի շրջանակներում նախատեսվում է ավարտել համապարփակ տեղեկատվական բազայի նախագծման և ներդրման աշխատանքները: Հայաստանի Հանրապետության մարզերում ՓՄՁ-ի սուբյեկտները հնարավորություն կունենան ինտերնետի միջոցով անմիջական կապի մեջ լինել խորհրդատու փորձագետների մշտական գործող աշխատանքային խմբի հետ և ստանալ անհրաժեշտ մասնագիտական խորհրդատվություն: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի յուրաքանչյուր մասնաճյուղում կտեղադրվի մեկ հանրային համակարգիչ, որից կարող են օգտվել ՓՄՁ-ի սուբյեկտները:

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կենտրոնական գրասենյակի և մարզային մասնաճյուղերի ամրապնդումն ու դրանց գործունեության ընդլայնումը մեծապես կնպաստի Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ-ի սուբյեկտների աջակցության համակարգի ձևավորման գործընթացին:

5.1.2 Որպես ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցող ենթակառույց՝ «Անդրոն» կոմպլեքսային էլեկտրասարքավորումների գիտահետազոտական ինստիտուտ» -տեխնոպարկի ամրապնդում և զարգացում

Շուկայական տնտեսավարման պայմաններում առանձնակի կարևոր նշանակություն ունի ՓՄՁ-ի սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը, որը նպաստում է տեղական արտադրանքի մրցունակության բարձրացմանը, ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից գիտատեխնիկական արդյունքների արդյունավետ օգտագործմանն ու նրանց արտահանման ներուժի ընդլայնմանը:

ՓՄՁ-ի սուբյեկտների տեխնոլոգիական և նորարարական աջակցության նպատակով ստեղծված տեխնոպարկում արդեն իսկ իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ՝ վերջինիս ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդման և զարգացման, տեխնոպարկի հաճախորդ ՓՄՁ-ի սուբյեկտների զարգացմանը նպաստող գործարար ծառայությունների մատուցման կարողությունների ընդլայնման ուղղությամբ:

ՓՄՁ-ի սուբյեկտներում նորարարությունների և նոր տեխնոլոգիաների ներդրմանն աջակցության տրամադրման նպատակով կիրականացվեն միջոցառումներ, որոնք ուղղված կլինեն տեխնոլոգիաների նոր ՓՄՁ-ի սուբյեկտների ներգրավման համար համապատասխան պայմանների ձևավորման, ինչը ենթադրում է առկա ենթակառուցվածքների զարգացում, վերանորոգում և նոր բաղադրիչների ավելացում: Դրա հետ մեկտեղ 2006 թվականին աշխատանքներ կիրականացվեն տեխնոլոգիայի գործունեության ընդլայնման և զարգացման ուղղությամբ:

5.2 ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցության նպատակով ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի շարունակում և ընդլայնում

ՓՄՁ-ի սուբյեկտների ֆինանսավորման (վարկավորման) հետ կապված հիմնախնդիրների հաղթահարման, դրանց ֆինանսական և ներդրումային աջակցության ցուցաբերման նպատակով ծրագրի շրջանակներում, որպես ծրագրային միջոցառում, 2006 թվականին կշարունակվի և կընդլայնվի վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագիրը:

Վարկային երաշխավորությունները տրամադրվում են Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի, որպես սույն ծրագիրն իրականացնող կառույցի, գործընկեր առևտրային բանկերի միջոցով ՓՄՁ-ի սուբյեկտների վարկավորման նպատակով: Այս ուղղությամբ Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ը կընդլայնի պայմանագրային հիմունքներով ՓՄՁ-ի սուբյեկտների վարկավորման ծրագրեր իրականացնող առևտրային բանկերի հետ իր համագործակցությունը:

Վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրից կարող են օգտվել «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ ՓՄՁ-ի սուբյեկտ հանդիսացող առևտրային կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը: Այստեղ նախապատվությունը կտրվի գրավի անբավարարության կամ ցածր իրացվելիության պատճառով չվարկավորված արտադրության կամ ծառայությունների ոլորտում գործող, ինչպես նաև տնտեսական ցածր ակտիվությամբ առանձնացող բնակավայրերում և շրջաններում առևտրի ոլորտում գործող շահառուներին կամ ներմուծումը փոխարինող, արտահանող, արտահանման ներուժ ունեցող, նորարարություններ ներդնող և նոր տեխնոլոգիաներ կիրառող ՓՄՁ-ի սուբյեկտներին:

Ծրագրի շրջանակներում նպատակային ՓՄՁ-ի սուբյեկտներին տրամադրվող երաշխավորության գումարը չի կարող գերազանցել վարկային պարտավորության 70 տոկոսը և 10 մլն դրամը:

2006 թվականին կշարունակվեն վարկային երաշխավորությունների տրամադրման մեխանիզմի և ընթացակարգերի կատարելագործման ուղղությամբ աշխատանքները:

Դրա հետ մեկտեղ ծրագրի շրջանակներում կոլիտարկվի մշակված ՓՄՁ-ի սուբյեկտներին տրամադրվող վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման ծրագրի նախագիծը, որի ընդունման և փորձնական գործարկման պայմաններում դրական արդյունքների ապահովման պարագայում հիմք կդրվի դրա իրականացման համար:

5.3 Սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցություն

«Սկսնակ գործարարների աջակցություն ծրագրի» նպատակն է խթանել նոր ՓՄՁ-ի սուբյեկտների ստեղծմանը և նրանց աջակցություն ցուցաբերել հենց հիմնադրման շրջանում, քանի որ ՓՄՁ-ի սուբյեկտները հաղթահարելով հիմնադրման և հաստատման կրիտիկական շրջանը (սովորաբար այն համարվում է երեք տարի ժամանակահատվածը) ավելի հազվադեպ են սկսնակ համարվում: Փորձը ցույց է տալիս, որ բոլոր երկրներում սկսնակ և երիտասարդ գործարարների հաջողության գրավականն է արդիական գիտիլիքները գործարար պլանավորման, շուկայավարման, կառավարման, մասնավորապես, ֆինանսների կառավարման և այլ բնագավառների վերաբերյալ, ինչպես նաև համապատասխան գործարար հմտությունների առկայությունը, գործարար խորհրդատվության և ֆինանսական ռեսուրսների մատչելիությունը և այլն: Այդ իսկ պատճառով նախատեսվում է համապատասխան աջակցություն ցուցաբերել սկսնակներին հենց հիմնադրման փուլում՝ նվազեցնելով վերջիններիս ձախողման ռիսկը:

Սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցության նպատակով ծրագրի շրջանակներում նախատեսվում է Երևանում և Հայաստանի Հանրապետության այլ մարզերում իրականացնել միջոցառումներ, որոնք կներառեն ուսուցման, մասնագիտական խորհրդատվության, ինչպես նաև տեղեկատվության տրամադրման բաղադրիչներ: Այդ միջոցառումների նպատակն է խթանել նոր ՓՄՁ-ի սուբյեկտների ստեղծմանը և համապատասխան աջակցություն ցուցաբերել նրանց հիմնադրման շրջանում:

Փորձը ցույց է տալիս, որ նման ծրագրերը նոր ՓՄՁ-ի սուբյեկտների ստեղծման համար հանդիսանում են արդյունավետ գործիք, սակայն հմտությունների զարգացման և գիտելիքների փոխանցման հետ մեկտեղ նոր գործ ձեռնարկելիս սկսնակ գործարարները բախվում են ֆինանսական միջոցների ձեռք բերման հետ կապված բազմաթիվ խնդիրների: Այդ իսկ պատճառով աշխատանքներ կիրականացվեն նաև ֆինանսական ռեսուրսների մատչելիության ապահովման, մասնավորապես ծրագրի շրջանակներում միկրո ֆինանսական հաստատություններից արտոնյալ պայմաններով փոխատվության տրամադրման (միկրովարկավորման) և փոխատվական հիմնադրամի ստեղծման մեխանիզմների մշակման ուղղությամբ:

Սկսնակ գործարարների ձեռներեցության զարգացման նպատակով աջակցություն կցուցաբերվի ՓՄՁ-ի սուբյեկտների մասնակցությամբ «Սկսնակ գործարարների աջակցություն ծրագրին» և նրանցից առավել հաջողակների հետ կիրականացվի երկարատև համագործակցություն:

5.4 ՓՄՁ-ի սուբյեկտներին՝ մտավոր սեփականության պաշտպանության, ստանդարտացման և համապատասխանության հավաստման ուղղությամբ աջակցություն

ՓՄՁ-ի սուբյեկտների համար մտավոր սեփականության պաշտպանության, ստանդարտացման և համապատասխանության հավաստման հնարավորությունների ապահովումը դա նրանց գործունեության հաջողության, տեղական շուկայում ամրապնդվելու և արտաքին շուկաներ մուտք գործելու գրավականներից է:

Ծրագրի շրջանակներում ՓՄՁ-ի սուբյեկտներին կցուցաբերվի աջակցություն՝ մտավոր սեփականության պաշտպանության, ստանդարտացման և համապատասխանության հավաստման հարցերում: Մասնավորապես. ՓՄՁ-ի սուբյեկտների համար կկազմակերպվեն մտավոր սեփականության պաշտպանության, ստանդարտացման և համապատասխանության հավաստման թեմաներով դասընթացներ, ինչպես նաև վերոհիշյալ հարցերին նվիրված սեմինար-խորհրդակցություններ և կլոր-սեղան քննարկումներ: Դրա հետ մեկտեղ վերոհիշյալ ուղղություններով ՓՄՁ-ի սուբյեկտներին կցուցաբերվի խորհրդատվական և տեղեկատվական աջակցություն մասնագիտացված գործարար ծառայություններ մատուցող կազմակերպությունների միջոցով՝ ըստ ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից ներկայացված հայտերի:

5.5 ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջնորդման աջակցություն

Շուկայական տնտեսավարման պայմաններում արդյունավետ ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հիմնական գրավականը թողարկվող արտադրանքը (մատուցվող ծառայությունները) պատշաճ մակարդակով շուկայում ներկայացնելը, սպառման ծավալներն ավելացնելը և ընդհանուր առմամբ թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջ մղելն է:

Ելնելով նշված նկատառումներից՝ 2006 թվականին ծրագրի շրջանակներում աջակցություն կցուցաբերվի ՓՄՁ-ի սուբյեկտներում որակի կառավարման (ԻՍՕ 9000 շարքի) միջազգային ստանդարտների ներդրմանը, մասնավորապես, աջակցություն կցուցաբերվի ՓՄՁ-ի սուբյեկտներում որակի կառավարման ԻՍՕ 9001-2000 համակարգի ներդրման ուղղությամբ խորհրդատվության տրամադրման ճանապարհով, ինչպես նաև կկազմակերպվեն ՓՄՁ-ի սուբյեկտներում որակի կառավարման (ԻՍՕ 9000 շարքի) և այլ միջազգային ստանդարտների ներդրման գործընթացներին նվիրված տեղեկատվական և ուսուցողական բնույթի միջոցառումներ, կիրատարակվեն համապատասխան տեղեկատվական նյութեր:

ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջնության ուղղությամբ ձեռնարկվող կարևոր միջոցառումներից է Հայաստանում և արտերկրներում կազմակերպվող ցուցահանդեսներին ՓՄՁ-ի սուբյեկտների մասնակցության ապահովումը: Այս ուղղությամբ 2006 թվականին ծրագրի շրջանակներում համապատասխան աջակցություն կցուցաբերվի արտահանման ներուժ ունեցող և հեռանկարային ՓՄՁ-ի սուբյեկտներին՝ Հայաստանում և արտերկրներում կազմակերպվող ցուցահանդեսներին նրանց կողմից թողարկվող արտադրանքը (մատուցվող ծառայությունները) լավագույն տեսքով ներկայացնելու համար:

Ծրագրի շրջանակներում ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցություն կցուցաբերվի նրանց կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկայում ներկայացնելու, մասնավորապես, դրանց՝ զանգվածային լրատվության միջոցներով (ՁԼՄ-ներ) լուսաբանման, ապրանքների փաթեթավորման, պիտակավորման, ձևավորման և այլ համապատասխան գործընթացների ուղղությամբ, որը վերջին հաշվով կնպաստի ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) մրցունակության և ՓՄՁ-ի սուբյեկտների հեղինակության բարձրացմանը:

5.6 ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն

ՓՄՁ-ի սուբյեկտներին *գործարար տեղեկատվությամբ* ապահովումը դրանց արդյունավետ գործունեության հիմնական երաշխիքներից է:

Ծրագրով նախատեսվում է տեղեկատվական ու վերլուծական նյութերի և պարբերականի (մասնագիտական և տեղեկատվական բնույթի գործարար ուղեցույցների, բրոշյուրների) հրատարակում (դրանք կտեղադրվեն նաև Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի ինտերնետային էջում), ինչպես նաև առկա տեղեկատվական բազայի կատարելագործում, ինչը համապարփակ գործարար տեղեկատվությամբ կապահովի Հայաստանի գործարար համայնքին:

Դրա հետ մեկտեղ ծրագրի շրջանակներում ՁԼՄ-ների միջոցով կապահովվի համապատասխան տեղեկատվություն Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի կողմից տրամադրվող աջակցության ուղղությունների (ծրագրերի) վերաբերյալ, ինչպես նաև պարբերաբար կկազմակերպվեն հեռուստաժամեր՝ ներկայացնելով ինչպես ՓՄՁ-ի սուբյեկտների առաջավոր փորձը, այնպես էլ նրանց հուզող հիմնախնդիրները և դրանց հաղթահարման (լուծման) հնարավոր ուղիները:

ՓՄՁ-ի սուբյեկտների արդյունավետ գործունեության հիմնական երաշխիքներից և կարևոր նախադրյալներից է նաև ՓՄՁ-ի սուբյեկտների համար *գործարար խորհրդատվության* ապահովումը:

Ծրագրով նախատեսվում է շարունակել ՓՄՁ-ի սուբյեկտներին պետական աջակցությունը՝ խորհրդատվական ծառայությունների մատուցման մատչելիության ապահովման հարցում:

ՓՄՁ-ի սուբյեկտներին խորհրդատվական աջակցություն կցուցաբերվի մասնագիտացված խորհրդատվական կազմակերպությունների միջոցով՝ ներդրումային և զարգացման ծրագրերի մշակման, կազմակերպությունների տնտեսական գործունեության վերլուծության, շուկայական հետազոտությունների իրականացման, կառավարման և շուկայավարման, հաշվապահության վարման, նորարարությունների կիրառման և ժամանակակից տեխնոլոգիաների առևտրայնացման, իրավաբանական, հարկային և մաքսային, արտադրանքի (ծառայությունների) առաջնման, մասնավորապես, ՓՄՁ-ի սուբյեկտներում որակի կառավարման (ԻՍՕ 9000 շարքի) միջազգային ստանդարտների (համակարգերի) ներդրման, ինչպես նաև այլ ուղղություններով՝ ըստ ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից ներկայացված հայտերի:

5.7 ՓՄՁ-ի սուբյեկտներին ուսուցողական աջակցություն

Ծրագրի շրջանակներում ՓՄՁ-ի սուբյեկտներին կցուցաբերվի նաև ուսուցողական աջակցություն:

Գործարար հմտությունների զարգացման և գործարար գիտելիքների մակարդակի բարձրացման նպատակով ՓՄՁ-ի սուբյեկտների համար կկազմակերպվեն մասնագիտական ուսուցման և վերապատրաստման դասընթացներ՝ ըստ ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից ներկայացված հայտերի:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՓՄՁ-ի սուբյեկտներին մեծամասամբ հասանելի չեն գործարար ուսուցողական ծառայությունները՝ հիմնականում դրանց թանկության պատճառով, ծրագրի շրջանակներում աջակցություն կցուցաբերվի այդ դասընթացներին նրանց մասնակցության ուղղությամբ՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն վճարելով դասընթացների արժեքը:

Նման դասընթացներին մասնակցությունը հնարավորություն կընձեռի սկսնակ գործարարներին ծանոթանալու ձեռնարկատիրական գործունեության հիմունքներին, իսկ գործող ՓՄՁ-ի սուբյեկտներին՝ ստանալու պարզաբանումներ և ուղեցույցներ գործող հարկային և մաքսային համակարգերի, ֆինանսների կառավարման, գործարար ու զարգացման ծրագրերի կազմման, ինչպես նաև ձեռք բերելու համապատասխան մասնագիտական գիտելիքներ և նոր հմտություններ կառավարման, շուկայավարման, գործարար էթիկայի, բանակցությունների վարման, վաճառքի տեխնիկայի և գործարարությանն առնչվող այլ բնագավառներում:

Ուսոցողական ծառայություններ մատուցող կազմակերպությունների մասնագիտական պատրաստվածության մակարդակի բարձրացման և նրանց կողմից մատուցվող ծառայությունների որակի բարելավման նպատակով ծրագրի շրջանակներում վերջիններիս համար կկազմակերպվեն վերապատրաստման դասընթացներ:

Ծրագրի շրջանակներում շահագրգիռ կառույցների հետ համատեղ կշարունակվեն կազմակերպվել ՓՄՁ-ի հիմնախնդիրներին նվիրված խորհրդատվություններ, սեմինարներ և կլոր-սեղան քննարկումներ:

5.8 Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ-ի ոլորտի զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում

2006 թվականին աշխատանքներ կիրականացվեն Հայաստանում ՓՄՁ-ի ոլորտի զարգացմանն ուղղված համապատասխան ծրագրեր (միջոցառումներ) իրականացնող միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնման, մասնավորապես, ՓՄՁ-ի ոլորտի զարգացման (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի, ՓՄՁ-ի պետական աջակցության տարեկան ծրագրերով նախատեսված միջոցառումների իրականացմանն ուղղությամբ:

Համաձայն Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության, Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության և Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի միջև կայացած հանդիպման և Ճապոնիայի տեխնիկական համագործակցության շրջանակներում «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկություններում մարդկային ռեսուրսների զարգացման ծրագրի» վերաբերյալ 2005 թվականի հունիսին ստորագրված Արձանագրության՝ 2006 թվականին կշարունակվի իրականացվել 2005 թվականի աշնանը սկսված վերոհիշյալ եռամյա (2005-2008 թվականներ) ծրագիրը:

2006 թվականին կշարունակվի համագործակցությունը նաև ՄԱԿ-ի Ջարգացման Ծրագրի, ԱՄՆ-ի Միջազգային Ջարգացման Գործակալության, Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակի, ինչպես նաև գերմանական «Փոքր և միջին ձեռնարկությունների խթանում» ծրագրի հետ:

Մինչև 2006 թվականի սեպտեմբեր ամիսը Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի և ՄԱԿ-ի Ջարգացման Ծրագրի միջև համագործակցության շրջանակներում կշարունակվեն իրականացվել ՓՄՁ-ի ոլորտի զարգացմանն ուղղված համատեղ միջոցառումներ՝ Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի գործունեության արդյունավետության ամրապնդման, կենտրոնական և տարածաշրջանային մակարդակներում ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական ծառայությունների տրամադրման, ՓՄՁ-ի սուբյեկտների շրջանում, հատկապես Հայաստանի Հանրապետության մարզերում, գործարար գիտելիքների և հմտությունների մակարդակի բարձրացման, ինչպես նաև ՓՄՁ-ի սուբյեկտների աջակցության համապատասխան ենթակառուցվածքների զարգացման և ամրապնդման ուղղությամբ:

Բացի այդ, Միացյալ Թագավորության միջազգային զարգացման վարչության հետ համագործակցության շրջանակներում 2006 թվականին կիրականացվեն ՓՄՁ-ի ոլորտի զարգացման համատեղ ծրագրեր Հայաստանի Հանրապետության մարզերում՝ ՓՄՁ-ի պետական աջակցության տարեկան ծրագրերի հիմնական միջոցառումների շրջանակներում:

6. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության 2006-2008 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով որպես ծրագրի իրականացման կողմնորոշիչ չափաքանակ է սահմանվել 350,000.0 հազ. դրամ:

Համաձայն «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի պահանջների՝ Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության տարեկան ծրագրերի ֆինանսավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից՝ առանձին տողով:

**ՀՍՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ՆԱԽԱՐԱՐ**

Մ. ԹՈՓՈՒԶՅԱՆ

VII. ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՓՈՒՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՉԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառումը	Կատարողը	Կատարման ժամկետը
5.1	ՓՄՉ-ի սուբյեկտներին աջակցության համապատասխան ենթակառուցվածքների ամրապնդում.		
	5.1.1 Հայաստանի ՓՄՉ ԶԱԿ-ի կենտրոնական գրասենյակի և մարզային մասնաճյուղերի ամրապնդում և դրանց գործունեության ընդլայնում	Հայաստանի ՓՄՉ ԶԱԿ (համաձայնությամբ)	2006 թվականի ընթացքում
	5.1.2 Որպես ՓՄՉ-ի սուբյեկտներին աջակցող ենթակառույց՝ «Անդրոն» կոմպլեքսային էլեկտրասարքավորումների գիտահետազոտական ինստիտուտ» - տեխնոլոգիայի ամրապնդում և զարգացում	Հայաստանի ՓՄՉ ԶԱԿ (համաձայնությամբ)	2006 թվականի ընթացքում
5.2	ՓՄՉ-ի սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցության նպատակով ՓՄՉ-ի սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի շարունակում և ընդլայնում	Հայաստանի ՓՄՉ ԶԱԿ (համաձայնությամբ)	Սկսած 2006 թվականի 1-ին եռամսյակից
5.3	Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն	Հայաստանի ՓՄՉ ԶԱԿ (համաձայնությամբ)	Սկսած 2006 թվականի 2-րդ եռամսյակից
5.4	ՓՄՉ-ի սուբյեկտներին՝ մտավոր սեփականության պաշտպանության, ստանդարտացման և համապատասխանության հավաստման ուղղությամբ աջակցություն	Հայաստանի ՓՄՉ ԶԱԿ (համաձայնությամբ)	2006 թվականի ընթացքում
5.5	ՓՄՉ-ի սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջնդմանն աջակցություն	Հայաստանի ՓՄՉ ԶԱԿ (համաձայնությամբ)	Սկսած 2006 թվականի 1-ին եռամսյակից
5.6	ՓՄՉ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն	Հայաստանի ՓՄՉ ԶԱԿ (համաձայնությամբ)	Սկսած 2006 թվականի 1-ին եռամսյակից
5.7	ՓՄՉ-ի սուբյեկտներին ուսուցողական աջակցություն	Հայաստանի ՓՄՉ ԶԱԿ (համաձայնությամբ)	Սկսած 2006 թվականի 1-ին եռամսյակից
5.8	Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՉ-ի ոլորտի զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարար ՀՀ շահագրգիռ նախարարներ	2006 թվականի ընթացքում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ՆԱԽԱՐԱՐ

Մ. ԹՈՓՈՒԶՅԱՆ